ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20-4»

ք. Դիլիջան «10» 08 2020 թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Մեն Սանթրոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 1), «Ռազմավարական զարգացման գործակալությունե ՀԿ, ի դեմս նախագահ՝ Մ.Այվազյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 2), որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ Գ. Թովմասյանը մի կողմից, և ,,Սարդարյանշին,, ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սիրարփի Սարդարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (բաց կամ ծածկով մակատեղ, հովվի կացարան) աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուները պարտավորվում են ընդունել կատարված աշխատանքը վճարել մրցույթում առաջարկված գնի (առանց ԱԱՀ) 10/90 համաֆինանսավորմամբ (10% Պատվիրատու 1-ի և 90 % Պատվիրատու 2՝ (վճարումը՝ համաձայն 5.1 կետի):

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 01.11.2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր վճարման ենթակա գումարը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների համար

- Պատվիրատու 1-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 789814 (յոթ հարյուր ութսունինը հազար ութ հարյուր տասնչորս) ՀՀ դրամ,

Չափաբաժին 1–ի համար վճարման ենթակա գումարը կազմում է 190337 (մեկ հարյուր իննսունհազար երեք հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ,

Չափաբաժին 2–ի համար - վճարման ենթակա գումարը կազմում է 196095 (մեկ հարյուր իննսունվեց հազար ինը իննսունհինգ) ՀՀ դրամ,

Չափաբաժին 3–ի համար - վճարման ենթակա գումարը կազմում է 200978 (երկու հարյուր հազար ինը հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ,

Չափաբաժին 4–ի համար - վճարման ենթակա գումարը կազմում է 202404 (երկու հարյուր երկու հազար չորս հարյուր չորս) ՀՀ դրամ,

Պատվիրատու 2-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 7108329 (յոթ միլիոն մեկ հարյուր ութ հազար երեք հարյուր քսանինը) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ, այդ թվում

Չափաբաժին 1–ի համար վճարման ենթակա գումարը կազմում է 1713031 (մեկ միլիոն յոթ հարյուր տասներեք հազար երեսունմեկ) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ

Չափաբաժին 2–ի համար վճարման ենթակա գումարը կազմում է 1764856 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ

Չափաբաժին 3–ի համար վճարման ենթակա գումարը կազմում է 1808804 (մեկ միլիոն ութ հարյուր ութ հազար ութ հարյուր չորս) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ

Չափաբաժին 4–ի համար վճարման ենթակա գումարը կազմում է 1821638 (մեկ միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր երեսունութ) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.2 Համաձայն վճարման ժամանակացույցի(Հավելված 3) Կապալառուն կատարված աշխատանքների համար ներկայացնելու է 2 կարգի հաշիվ ապրանքագրեր՝

- Պատվիրատու 1-ին՝ հարկային հաշիվ ներառյալ ԱԱՀ,
- Պատվիրատու 2-ին՝ հաշվարկային փաստաթուղթ առանց ԱԱՀ, որն էլ իր հերթին պարտավորվում է ներկայացնել Կառավարության 26 փետրվարի 2004թ-ի 256-Ն Որոշման համաձայն ԱԱհՀ-ից ազատման վերաբերյալ տեղեկանք

Պատվիրատուները վճարումը կիրականացնեն Կապալառուի կողմից ներկայացված հանձնման- ընդունման արձանագրության և հաշիվ ապրանքագրի հիման վրա:

5.1.3 Վճարման ներկայացված յուրաքանչյուր հանձնման-ընդունման արձանագրություն հաշվարկվում է Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագրի հիման վրա, որը Կապալառուի կողմից ներկայացվում է սույն պայմանագրի պահանջների համաձայն: Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագիրը պետք է արտացոլի ողջ Պայմանագրի Արժեքի բաշխումը ըստ աշխատանքի առանձին փուլերի և ներկայացվի այն տեսքով և ժամկետներում, որոնք կերաշխավորեն դրա գործնական կիրառումը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով նրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դիլիջանի համայնքապետարան	,,Սարդարյանշին,, ՍՊԸ
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55	Ք. Վանաձոր, Երևանյան խճ. 147/1բն.33
ՀՎՀՀ 07618909	ՀՎՀՀ 06956374
ՀՀ 900402051248	ՀՀ Բանկ՝«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1570051775040100
Համայնքի ղեկավար Ա. Սանթրոսյան	Տնօրեն Ս. Սարդարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀՀԿ
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500224007010 01
ՀՎՀՀ 01831308
Նախագահ՝ _____

Լիազորված անձ _____

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 10 » 08 2020 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20-4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի ,,Ռուստամի ուրթ,, արոտավայրի բաց մակատեղի կառուցում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1 Դիլիջանի համայնքապետարան

	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
	-				
1	3-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0.488	34.281	16.729
2	3-րդ կարգի բնահողի կտրում ձեռքով	մ^3	7.0	0.242	1.696
3	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2.40	0.101	0.242
4	բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ.	մ^3	2.40	4.598	11.036
5	Մետաղական շինվածքներ տեղադրում	տն	2.691	5.683	15.292
6	Պողպ.քառակուսի խողովակ 80x80x5մմ	մ	64.00	0.558	35.725
7	Պողպ.քառակուսի խողովակ 50x50x4մմ	մ	352.78	0.270	95.141
8	Պողպ.անկյունակ L25x3	մ	2.56	0.058	0.149
9	Պողպ.անկյունակ L40x3	մ	0.5	0.092	0.046
10	Պողպ.ձող Φ12մ A500c	կգ	23.00	0.038	0.881
11	Պողպ.թերթ 3մմ	տն	0.005	49.735	0.249
12	Պողպ.թերթ/20հատ/	տն	0.020	49.735	0.995
13	կախովի փական	հատ	5	0.193	0.967
14	մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0.91	12.298	11.191
	Ընդամենը				*190.337*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2 <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀՀԿ

	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
	-				
1	3-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0.488	308.525	150.560
2	3-րդ կարգի բնահողի կտրում ձեռքով	մ^3	7.0	2.181	15.264
3	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2.40	0.906	2.175
4	բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ.	մ^3	2.40	41.384	99.323
5	Մետաղական շինվածքներ տեղադրում	տն	2.691	51.143	137.625
6	Պողպ.քառակուսի խողովակ 80x80x5մմ				

7	Պողպ.քառակուսի խողովակ 50x50x4մմ	մ	352.78	2.427	856.266
8	Պողպ.անկյունակ L25x3	մ	2.56	0.522	1.337
9	Պողպ.անկյունակ L40x3	մ	0.5	0.832	0.416
10	Պողպ.ձող Φ12մ A500c	կգ	23.00	0.345	7.931
11	Պողպ.թերթ 3մմ	տն	0.005	447.616	2.238
12	Պողպ.թերթ/20հատ/	տն	0.020	447.616	8.952
13	կախովի փական	հատ	5	1.740	8.702
14	մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0.91	110.682	100.721
	ԸՆԴԱՄԵՆԸ				*1713.031*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ս.
Սանթրոսյան

/ստորագրություն/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<<Ռազմավարական զարգացման գո
ծակալություն>> ՀՀԿ
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701001
ՀՎՀՀ 01831308
Նախագահ՝

Լիազորված անձ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Սարդարյանշին,, ՍՊԸ
Ք. Վանաձոր, Երևանյան խճ.
147/1բն.33
ՀՎՀՀ 06956374
ՀՀ Բանկ՝«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570051775040100

Տնօրեն Ս. Սարդարյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 1-1
« 10 » 08 2020 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20-4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի „Մեղմասար„ արոտավայրի բաց մակատեղի կառուցում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1 Դիլիջանի համայնքապետարան

	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
	-				
1	4-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0.360	59.830	21.539
2	4-րդ կարգի բնահողի կտրում ձեռքով	մ^3	6.0	0.426	2.558
3	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2.40	0.101	0.242
4	բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ.	մ^3	2.40	4.601	11.041
5	Մետաղական շինվածքներ տեղադրում	տն	2.691	5.685	15.299
6	Պողպ.քառակուսի խողովակ 80x80x5մմ	մ	64.00	0.558	35.743
7	Պողպ.քառակուսի խողովակ 50x50x4մմ	մ	352.78	0.270	95.189
8	Պողպ.անկյունակ L25x3	մ	2.56	0.058	0.149
9	Պողպ.անկյունակ L40x3	մ	0.5	0.092	0.046
10	Պողպ.ձող Φ12մ A500c	կգ	23.00	0.038	0.882
11	Պողպ.թերթ 3մմ	տն	0.005	49.760	0.249
12	Պողպ.թերթ/20հատ/	տն	0.020	49.760	0.995
13	կախովի փական	հատ	5	0.193	0.967
14	մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0.91	12.304	11.197
	Ընդամենը				***196.095***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2 <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀՀԿ

	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
1	4-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0.360	538.467	193.848
2	4-րդ կարգի բնահողի կտրում ձեռքով	մ^3	6.0	3.837	23.023
3	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2.40	0.907	2.176
4	բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ.	մ^3	2.40	41.405	99.373
5	Մետաղական շինվածքներ տեղադրում	տն	2.691	51.168	137.694
6	Պողպ.քառակուսի խողովակ 80x80x5մմ	մ	64.00	5.026	321.684
7	Պողպ.քառակուսի խողովակ 50x50x4մմ	մ	352.78	2.428	856.697
8	Պողպ.անկյունակ L25x3	մ	2.56	0.522	1.337
9	Պողպ.անկյունակ L40x3	մ	0.5	0.832	0.416
10	Պողպ.ձող Φ12մ A500c	կգ	23.00	0.345	7.935
11	Պողպ.թերթ 3մմ	տն	0.005	447.841	2.239

12	Պողպ.բերք/20հատ/	տն	0.020	447.841	8.957
13	կախովի փական	հատ	5	1.741	8.706
14	մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0.91	110.738	100.771
	Ընդամենը				*1764.856*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա.
Սանթրոսյան

/ստորագրություն/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<<Ռազմավարական զարգացման գո
ծակալություն>> ՀՀԿ
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701001
ՀՎՀՀ 01831308
Նախագահ՝

Լիազորված անձ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Սարդարյանշին,, ՍՊԸ
Ք. Վանաձոր, Երևանյան խճ.
147/1բն.33
ՀՎՀՀ 06956374
ՀՀ Բանկ՝«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570051775040100

Տնօրեն Ս. Սարդարյան

/ստորագրություն/
Մ.Տ.

Հավելված թիվ 1-1
« 10 » 08 2020 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20-4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի „Սառնպաս„ արոտավայրի բաց մակատեղի կառուցում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1 Դիլիջանի համայնքապետարան

	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
	-				
1	3-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0.780	34.223	26.694
2	3-րդ կարգի բնահողի կտրում ձեռքով	մ^3	11.0	0.242	2.661
3	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2.40	0.101	0.241
4	բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ.	մ^3	2.40	4.591	11.017
5	Մետաղական շինվածքներ տեղադրում	տն	2.691	5.673	15.266
6	Պողպ.քառակուսի խողովակ 80x80x5մմ	մ	64.00	0.557	35.665
7	Պողպ.քառակուսի խողովակ 50x50x4մմ	մ	352.78	0.269	94.981
8	Պողպ.անկյունակ L25x3	մ	2.56	0.058	0.148
9	Պողպ.անկյունակ L40x3	մ	0.5	0.092	0.046
10	Պողպ.ծող Φ12մ A500c	կգ	23.00	0.038	0.880
11	Պողպ.թերթ 3մմ	տն	0.005	49.652	0.248
12	Պողպ.թերթ/20հատ/	տն	0.020	49.652	0.993
13	կախովի փական	հատ	5	0.193	0.965
14	մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0.91	12.277	11.172
	Ընդամենը				*200.978*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2 <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀՀԿ

	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
	-				
1	3-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0.780	308.008	240.246
2	3-րդ կարգի բնահողի կտրում ձեռքով	մ^3	11.0	2.177	23.946
3	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2.40	0.905	2.171
4	բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ.	մ^3	2.40	41.315	99.156
5	Մետաղական շինվածքներ տեղադրում	տն	2.691	51.057	137.394
6	Պողպ.քառակուսի խողովակ 80x80x5մմ	մ	64.00	5.015	320.983
7	Պողպ.քառակուսի խողովակ 50x50x4մմ	մ	352.78	2.423	854.830

8	Պողպ.անկյունակ L25x3	մ	2.56	0.521	1.334
9	Պողպ.անկյունակ L40x3	մ	0.5	0.830	0.415
10	Պողպ.ձող Φ12մ A500c	կգ	23.00	0.344	7.918
11	Պողպ.թերթ 3մմ	տն	0.005	446.865	2.234
12	Պողպ.թերթ/20հատ/	տն	0.020	446.865	8.937
13	կախովի փական	հատ	5	1.737	8.687
14	մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0.91	110.496	100.552
	Ընդամենը				*1808.804*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա.
Սանթրոսյան

/ստորագրություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<<Ռազմավարակ[illegible] զարգացման գո
ծակալություն>> Հ[illegible]
Բանկը՝ «Ինե[illegible]դանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701001
ՀՎՀՀ 01831308
Նախագահ՝

Լիազորված անձ

/ստորագրություն
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Սարդարյանշին,, ՍՊԸ
Ք. Վանաձոր, Երևանյան խճ.
147/1բն.33
ՀՎՀՀ 06956374
ՀՀ Բանկ՝«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570051775040100

Տնօրեն Ս. Սարդարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1-1
« 10 » 08 2020 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20-4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Դիլիջան համայնքի Հովք բնակավայրի ,,Չաթմախանա,, արոտավայրի բաց մակատեղի կառուցում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1 Դիլիջանի համայնքապետարան

	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
1	3-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0,830	34,223	28,405
2	3-րդ կարգի բնահողի կտրում ձեռքով	մ^3	10,0	0,238	2,376
3	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2,40	0,101	0,241
4	բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ.	մ^3	2,40	4,591	11,017
5	Մետաղական շինվածքներ տեղադրում	տն	2,691	5,673	15,266
6	Պողպ.քառակուսի խողովակ 80x80x5մմ	մ	64,00	0,557	35,665
7	Պողպ.քառակուսի խողովակ 50x50x4մմ	մ	352,78	0,269	94,981
8	Պողպ.անկյունակ L25x3	մ	2,56	0,058	0,148
9	Պողպ.անկյունակ L40x3	մ	0,5	0,092	0,046
10	Պողպ.ձող Φ12մ A500c	կգ	23,00	0,038	0,880
11	Պողպ.թերթ 3մմ	տն	0,005	49,652	0,248
12	Պողպ.թերթ/20հատ/	տն	0,020	49,652	0,993
13	կախովի փականներ	հատ	5	0,193	0,965
14	մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0,91	12,277	11,172
	Ընդամենը				*202,404*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2 <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀՀԿ

	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
	-				
1	3-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0,830	308,008	255,646
2	3-րդ կարգի բնահողի կտրում ձեռքով	մ^3	10,0	2,138	21,380
3	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2,40	0,905	2,171
4	բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ.	մ^3	2,40	41,315	99,156
5	Մետաղական շինվածքներ տեղադրում	տն	2,691	51,057	137,394
6	Պողպ.քառակուսի խողովակ 80x80x5մմ	մ	64,00	5,015	320,983
7	Պողպ.քառակուսի խողովակ 50x50x4մմ	մ	352,78	2,423	854,830
8	Պողպ.անկյունակ L25x3	մ	2,56	0,521	1,334
9	Պողպ.անկյունակ L40x3	մ	0,5	0,830	0,415

10	Պողպ.ձող Φ12մ A500c	կգ	23,00	0,344	7,918
11	Պողպ.թերթ 3մմ	տն	0,005	446,865	2,234
12	Պողպ.թերթ/20հատ/	տն	0,020	446,865	8,937
13	կախովի փական	հատ	5	1,737	8,687
14	մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0,91	110,496	100,552
	Ընդամենը				*1821,638*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ս.
Սանթրոսյան

/ստորագրություն/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<<Ռազմավարական զարգացման գո
րծակալություն>> ՀՀԿ
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701001
ՀՎՀՀ 01831308
Նախագահ՝

Լիազորված անձ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Սարդարյանշին,, ՍՊԸ
Ք. Վանաձոր, Երևանյան խճ.
147/1բն.33
ՀՎՀՀ 06956374
ՀՀ Բանկ՝«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570051775040100

Տնօրեն Ս. Սարդարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 10 » 08 2020 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20-4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի ,,Ռուստամի ուրթ,, արոտավայրի բաց մակատեղի կառուցում	10.08.2020թ.	01.11.2020թ.
2	Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի ,,Մեղմասար,, արոտավայրի բաց մակատեղի կառուցում	10.08.2020թ.	01.11.2020թ.
3	Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի ,,Սառնասար,, արոտավայրի բաց մակատեղի կառուցում	10.08.2020թ.	01.11.2020թ.
4	Դիլիջան համայնքի Հովք բնակավայրի ,,Չաթմախանա,, արոտավայրի բաց մակատեղի կառուցում	10.08.2020թ.	01.11.2020թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա. Սանթրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Սարդարյանշին,, ՍՊԸ
Ք. Վանաձոր, Երևանյան խճ. 147/1բն.33
ՀՎՀՀ 06956374
ՀՀ Բանկ՝«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570051775040100

Տնօրեն Մ. Սարդարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀՀԿ
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701001
ՀՎՀՀ 01831308

Նախագահ՝ _____

Լիազորված անձ _____

/ստորագրություն/
Կ.Տ